

Մամլոյ հաղորդագրութիւն «Հողի Օր»-ուան վերաբերեալ

Մարտ Երեսունը կը զուգադիպէ «Հողի Օր»-ուան յիշատակը, որ կը համարուի առանցքային իրադարձութիւն Պաղեստինեան դատին, ուր առաջին անգամ 1948-էն ի վեր, արտայայտեցին Պաղեստինցիները Կանանչ գիծէն ներս այս օրուայ նման 1976-ին, իրենց հաւատարմութիւնը Պաղեստինեան ինքնութեան և պայքարեցան քաջաբար զինուորական կառավարիչին որոշումներուն, գրաւելու հազարաւոր "Տոնում"-ներ Պաղեստինեան հողերէն Կալիփոյ և Նէկէվի մէջ:

Ժողովրդավարական Փոփոխութեան Ուժերու Ազգային Համակարգող Մարմինը կ'ողջունէ այս առիթին մեր ժողովուրդը Կալիփոյ, Մուսէլէսի և Նէկէվի մէջ, որոնք կը դիմադրեն քաջօրէն ցեղային քաղաքականութիւնը թշնամիին կառավարութեան, որ կը փորձէ պարտադրել պետութեան Հրէականութիւնը: Նաեւ կը յայտնէ Համակարգող Մարմինը իր աջակցութիւնը եղբայրական Պաղեստինեան ժողովուրդին իրաւունքին վերականգնելու իրենց լրիւ ազգային իրաւունքները, այդ թուում Պաղեստինեան գաղթականներուն վերադարձը ըստ ՄԱԿ-ի ընդհանուր ժողովին բանաձեւ թիւ 194-ին, հրապարակուած 1948-ին, և բանաձեւ թիւ 3236 հրապարակուած 1974-ին, որ շեշտեց Պաղեստինի ժողովուրդին անօտարանալի իրաւունքները, մասնաւորապէս ինքնաորոշման իրաւունքը առանց արտաքին միջամտութեան, և անկախութեան ու ազգային ինքնիշխանութեան իրաւունքը, նաև Պաղեստինցիներուն անօտարանալի իրաւունքը վերադառնալու իրենց տուները և կալուածները, որոնցմէ տեղահանուեցան և արմատախլուեցան:

Տեղեկատուական գրասենեակ – Ազգային Համակարգող Մարմին

30/03/2014